

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամ-ի կարիքների համար տպագրական աշխատանքներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ՇՀԱՇՁԲ-15-3-16/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրի շրջանակում գնահատող հանձնաժողովի նիստի.

ք. Գավառ

5 սեպտեմբերի 2016թ.

Սույն թվականի սեպտեմբերի 2-ին ժամը 14.30-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամ՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար տպագրական աշխատանքներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ՇՀԱՇՁԲ-15-3-16/10» շրջանակային համաձայնագրի շրջանակում գնային առաջարկների բացման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Խ. Ժ. Սաֆարյանը, հանձնաժողովի անդամներ՝ Լ. Գ. Սիրունյանը, Ս. Պ. Կարապետյանը: Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց գրանցամատյանի գրառումների մասին, ըստ որի հայտ պարունակող ծրար է ներկայացրել «ՄԻՍՄԱ» ՍՊԸ (ք. Երևան, Հանրապետության 49, 7/1) կազմակերպությունը և «Իրինա Մելքոնյան» ԱԶ-ն (ք. Երևան, Շերամի 47 շենք, բնակարան 28):

Հայտեր պարունակող ծրարներ չեն ներկայացրել ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/3 շրջանակային համաձայնագիր կնքած և հրավերն ստացած թվով 129 կազմակերպություններ:

Հանձնաժողովը գնահատեց.

1) «ՄԻՍՄԱ» ՍՊԸ-ի հայտ պարունակող ծրարը մասնակցի կողմից կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝

- շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում,
- հայտարարություն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին,
- հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին,
- հայտարարություն՝ ֆինանսական միջոցների մասին,
- հայտարարություն՝ տեխնիկական միջոցներ մասին,
- հայտարարություն՝ աշխատանքային ռեսուրսների մասին,
- գնի առաջարկ 1-6 չափաբաժինների համար:

Ծրարում առկա էր մեկ բնօրինակ, երկու պատճեն, յուրաքանչյուրը՝ յոթ էջից:

2) «Իրինա Մելքոնյան» ԱԶ-ի հայտ պարունակող ծրարը մասնակցի կողմից կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝

- շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում,
- հայտարարություն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին,
- հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին,

- հայտարարություն՝ ֆինանսական միջոցների մասին,
- հայտարարություն՝ տեխնիկական միջոցներ մասին,
- հայտարարություն՝ աշխատանքային ռեսուրսների մասին,
- գնի առաջարկ 3 և 4 չափաբաժինների համար:

Ծրարում առկա էր մեկ բնօրինակ, երկու պատճեն, յուրաքանչյուրը՝ յոթ էջից:

Գնման առարկայի նախահաշվային գինն ըստ չափաբաժինների հետևյալն է՝

Չափաբա- ժինը	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը
1	Ուսումնական պարապմունքների մատյան մեծ	42500 /քառասուներկու հազար հինգ հարյուր դրամ/
2	Ուսումնական պարապմունքների մատյան փոքր	52.500 /հիսուներկու հազար դրամ/
3	Ուսանողական տոմս	40.000 /քառասուն հազար դրամ/
4	Ստուգման գրքույկ	121.000 /մեկ հարյուր քսանմեկ հազար դրամ/
5	Դրամարկղային մուտքի օրդեր	1.200 /մեկ հազար երկու հարյուր դրամ/
6	Պաշտոնական ձևաթուղթ	60.000 /վաթսուն հազար դրամ/

Գնային առաջարկների համադրում ՀՀ դրամով, առանց ԱԱՀ-ի՝

Չափաբա- ժինը	Գնման առարկայի անվանումը	«ՄԻՍՄԱ» ՍՊԸ	«Իրինա Մելքոնյան» ԱԶ
1	Ուսումնական պարապմունքների մատյան մեծ	62.500 /վաթսուներկու հազար հինգ հարյուր դրամ /	-
2	Ուսումնական պարապմունքների մատյան փոքր	75.000 /յոթանասունհինգ հազար դրամ /	-
3	Ուսանողական տոմս	90.000 /իննսուն հազար դրամ /	30.000 /երեսուն հազար/
4	Ստուգման գրքույկ	121.000 /մեկ հարյուր քսանմեկ հազար դրամ /	110.000 /մեկ հարյուր տասը հազար/
5	Դրամարկղային մուտքի օրդեր	3.600 /երեք հազար վեց հարյուր դրամ /	-
6	Պաշտոնական ձևաթուղթ	270.000 /երկու հարյուր յոթանասուն հազար դրամ /	-

3) Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ 30-րդ և 36-րդ հոդվածների պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

«ՄԻՍՄԱ» ՍՊԸ-ի հետ վարել բանակցություններ գնի նվազման շուրջ՝ հաշվի առնելով այն փաստը, որ նա 1, 2, 5, 6 չափաբաժիններով հանդիսանում է միակ մասնակից, իսկ 5, 6

չափաբաժիններով ըստ ներկայացված գնային առաջարկների շահույթ բաղադրիչի հիման վրա հնարավոր չէ կատարել գնի նվազեցում, ուստի բանակցությունները վարվելու են 1, 2 չափաբաժինների համար:

Բանակցությունների արդյունքում ընթացակարգի մասնակից «ՄԻՍՄԱ» ՍՊԸ-ի կողմից կատարվեցին 1 և 2 չափաբաժինների գնային առաջարկների նվազեցում, այն է՝

Չափաբա- ժինը	Գնման առարկայի անվանումը	«ՄԻՍՄԱ» ՍՊԸ
1	Ուսումնական պարապմունքների մատյան մեծ	42500 /քառասուներկու հազար հինգ հարյուր դրամ/
2	Ուսումնական պարապմունքների մատյան փոքր	52.500 /հիսուներկու հազար դրամ/

- ✓ 1 և 2 չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՄԻՍՄԱ» ՍՊԸ-ին:
- ✓ 3 և 4 չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Իրինա Մելքոնյան» ԱԶ-ին, իսկ 4 չափաբաժնով երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՄԻՍՄԱ» ՍՊԸ-ին:
- ✓ 5 և 6 չափաբաժիններով ընթացակարգը համարել չկայացած:
- ✓ Ընթացակարգի մասնակցին տեղեկացնել որոշման մասին:
- ✓ Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել հաստատել պայմանագրերի նախագծերը և ներկայացնել պայմանագրերի ապահովում:
- ✓ Սույն արձանագրությունը հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
 - ✓ Անգործության ժամկետ սահմանել 5 օր սահմանվում:
- ✓ ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն հարցում կատարել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:
- ✓ Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել անգործության ժամկետի ավարտից հետո:

հանձնաժողովի նախագահ՝



Խ. Ժ. Սաֆարյան

հանձնաժողովի անդամ՝



Լ. Գ. Սիրունյան

հանձնաժողովի անդամ՝



Ս. Պ. Կարապետյան

հանձնաժողովի քարտուղար՝



Ս. Բ. Ղարաբաղյան